# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան Փ. 164, (0261) 4-00-01, sevan.gegharkunik@mta.gov.am

**Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք   Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ի Ց**

17 դեկտեմբերի 2024 թվականի N170-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ, 32-րդ հոդվածներով, 33-րդ հոդվածի 3-րդ մասով,

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի 2024 թվականի բյուջեն՝ համաձայն 1-6 հավելվածների:
 1/Վարչական բյուջեի եկամուտները՝ 2169097.3 հազար դրամ
 2/Վարչական բյուջեի ծախսերը՝ 2169097.3 հազար դրամ
 3/Վարչական բյուջեի հավելուրդը /պակասորդը/՝ 0.0 /զրո/ հազար դրամ
 4/ Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե՝ 610000.0 հազար դրամ
5/ Ֆոնդային բյուջեի եկամուտները՝ 1710000.0 հազար դրամ
6/ Ֆոնդային բյուջեի ծախսերը՝ 1710000.0 հազար դրամ
7/ Ֆոնդային բյուջեի հավելուրդը /պակասորդը/՝ 0.0 /զրո/ հազար դրամ
2. Հաստատել Սևան համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել Սևան համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական դասակարգման՝ համաձայն հավելված 2-ի:
4. Հաստատել Սևան համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ՝ համաձայն հավելված 6-ի:
6. Սահմանել, որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:

7. Սևան համայնքի ղեկավարին թույլատրել՝

1) Սևան համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել համապատասխան վերաբաշխումներ՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի.

2) Անհրաժեշտության դեպքերում բյուջետային տարվա ընթացքում առանց սահմանափակումների համայնքի բյուջեում կատարել համապատասխան փոփոխություններ:

8. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -18 Դեմ -0 Ձեռնպահ-0

1. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԹՈՐՈՍՅԱՆ ԽԱՉԻԿ
7. ԽԱԼԱՖՅԱՆ ՆՈՐԻԿ
8. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ
9. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱԿԻՉ
10. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
11. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
12. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ
13. ՇՈՒՇԱՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ
14. ՍԱՐԳՍՅԱՆ ԺԱՆՆԱ
15. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
16. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
17. ՍԵԴՐԱԿՅԱՆ ՆՎԵՐ
18. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ